Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

15842

355.2
F-95

1988

2010

2010

210

ԱՆՁՆՈՒԷՐ ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ
ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՐԻՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ

ՆՈՐԸՆՏԻՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Վլադիմիրի քաղաքի Պետրոս—Պօղոս եկեղեցւոյ քահանայ Դիմիտրի Բուլգակովսկու ասած.

թարգմանուած ռուսերէնից

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԴՆԴԱՊԵՏ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ ՄԷԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսիսի Վարդանեան

1888



2001

3552
Б-95

ԱՆՁՆՈՒԷՐ ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ

ՆՈՐԸՆՏԻՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Վօլկովեսկ քաղաքի Պետրոս—Պօղոս եկեղեցւոյ քահանայ Դիմիտրի Բուլգակովսկու ասած.

Թարգմանութիւն ռուսերէնից

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳՆԴԱՊԵՏ ԱՂԷՔՍԱՆԴՐ
ՄԵԼԻՔ-ՀԱՅԿԱԶԵԱՆՑԻ

ԹԻՖԼԻՍ

Տպարան Մովսիսի Վարդանեան

1888

Доз. Ценз. Тифлисъ, 22 Ноября, 1888 г.

Тип. М. Вартанянцъ, Тройц. пер. д. № 11

50396-ու

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

36153.66

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔ

ՆՈՐԸՆՏԻՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Երջանիկ է նա, ով կը դաստիարակուէ այս խրատներով, և ով որ սրտով կընդունի այս խօսքերը, նա իմաստութիւն կըստանայ։

Սիր. Գլ. 50 յօդ. 30

Խելացի մարդն երբ մտադրւում է ճանապարհորդել, ամենից առաջ նա մտածում է այն բանի վերայ, թէ ինչպէս անի, որ յաջողութեամբ կարողանայ կատարել այդ ճանապարհորդութիւնը։

Միեւնոյնը պէտք է անես եւ դու, որ նոր ես մտել զինուորական ծառայութեան մէջ։

Դու պարտական ես մոռանալ քո նոր պաշտօնի եւ այն պարտականութիւնների վերայ, ինչ որ պաշտօնը պահանջում է։

Ես ինքս, իմ սիրելի բարեկամ, սրտանց ուրախացած քո նոր նշանակութեան համար, կամենում եմ քո վերջին հրաժեշտի օրը մի երկու խօքով քեզ մնաս բարեւ ասել։

Քո առաջին գործը պէտք է լինի չը տրտնջալ, որ քեզ վիճակուել է զինուորութիւնը, գիտացիր, որ Աստուծոյ կամքն էր այդ։ Երկրորդ անելիքդ է սիրել հոգւով եւ սրտով զինուորական ծառայութիւնը։

Քեզ յայտնի է, որ ամէն մարդ գովում եւ պարծենում է իւր արհեստովն ու կոչումովը. ուրեմն դու էլ քեզ փառք պէտք է համարես քո նոր կոչումդ, որովհետեւ զինուորականութիւնը բոլոր ծառայութիւններից ամենապատուաւորն է։

Աստծներս կեղծիք չը համարես. զինուորական ծառայութիւնն ամէն պաշտօններից բարձր եւ յարգելի է։ Ոչինչ այնքան սուրբ չէ, այնքան վսեմ չէ, ինչպէս Հաւատի համար գլուխը յետ դնելը, արտաքին թշնամիների դէմ արքայական Գահի եւ Հայրենիքի համար անձը չը խնայելը, նոյնպէս եւ ներսը՝ իւր տան մէջ կարգ եւ խաղաղութիւն պաշտպանելը. այո՛ սուրբ բան է այդ, Աստուածային պատուիրանքն է այդ։ Իսկ ի՞նչ է զինուորական ծառայութիւնը, եթէ ոչ վերոյիշեալ նուիրական պարտականութիւնները կատարելը։ Ինքդ լաւ մոռանիր, ի՞նչ կը լինէր քո հայրենի տան վիճակը, ի՞նչ տեղ կը մնար քո հաւատդ, քո նախնական ծէսերը, ի՞նչպէս կը կատարուէին մեր կեանքն ապահովող եւ հովանաւորող օրէնքները, վերջապէս ի՞նչ դէպքեր ու արկածքներ չէին պատահիլ քո մայրենի աշխարհի

եւ ծննդավայրի հետ, եթէ զինուորական ծառայութիւնը չը լը լինէր։

Արտաքուստ՝ թշնամեաց յարձակմունքներն եւ ներքուստ՝ ընտանեկաներկպառակութիւններն ու խռովութիւնները կաւերէին ամենայն ինչ, վերջին թելին կը հասցնէին ամէնքին։ Միմիայն զինուորական ծառայութիւնն է, որ ամուր պարսպի նման պատսպարում է օտարների ձեռքից ամբողջ Ռուսիան։

Զինուորական ծառայութիւնն է, որով կեանքի ապահովութիւնը թագաւորում է մեր մէջ։

Նրա շնորհիւն է, որ ոչ ոք չի հաւատում, թէ մի օրից մի օր ներքին եւ արտաքին կեղեքիչներն ու թշնամիները կը յափշտակեն իւր սեպհականութիւնները։ Վաճառականն իւր ազատ առեւտուրն է անում, երկրագործն աներկիւղ իւր աշխատանքի հետ է, իւր ընտանիքի հոգն քաշում, նա միանգամայն

ապահով է, որ իւր ճակատի քրտնքին ոչ ոք չի վստահանալ անպատիժ ձեռնամուխ լինել։ Կրօնն եւ սուրբ ծէսերն ազատ համարձակ պաշտելի են ամենայն տեղ, հայրենի օջաղն եւ հասարակաց խաղաղութիւնն երկիւղ չունին ոչինչ ճնշումներից եւ կամայականութիւններից։ Թշնամին միշտ երկիւղի մէջ է եւ զինուորականութեան յառաջ գողում է։ Միով բանիւ՝ զինուորական ծառայութիւնն է, որ պաշտպանում եւ հովանաւորում է քո ընտանիքիդ եւ յայնատարած Ռուսիան, նա ինքն է, որ հնարաւորութիւն է տալիս ամէն մարդու արձակ համարձակ վայելել այս աշխարհիս բարիքն եւ վայելչութիւնները։ Եւ այսօր դու էլ ուրիշների հետ միասին մտել ես այս սրբազան կոչման մէջ, աշխատիր, ուրեմն, արժանի լինել քո նշանակութեանն եւ պաշտօնին։

Քո ընդունած երդումը քեզ վերայ պարտք է դնում ամէնից յառաջ հաւատարմութիւնով եւ անկեղծութիւնով ծառայել քո ճըշմարիտ, հարազատ, Ամէնողորմած Կայսերը, որ մեր Հայրենիքի հայրն է, որ Աստուծոյ Օծեալն է եւ այս աշխարհիս վերայ նորա երկրաւոր գահակալն է. պարտք է դնում հաւատարիմ լինել եւ մեր Թագաւորի ծառանգին: Այո, դու երդուել ես քո կեանքդ, մինչեւ վերջին կաթիլ արիւնդ չը խնայել Նոցա համար:

Դու պէտք է անխարդախ եւ անսահման սիրով սիրես Արքունի Գահը եւ Հայրենիքը, քո հոգին պէտք է անբիծ արեգակի նման, բորբոքուած կրակի պէս վառուի Նոցա սիրով: Քո անկեղծ եւ անսահման սէրդ, ասում եմ, պէտք է թափանցէ մինչեւ ոսկրներդ, պէտք է ներգործէ քո հոգւոյ եւ զգացմունքների վերայ, պէտք է եռանդ եւ

բորբոք զարթացնէ քո կրծքի մէջ, նա պէտք է պատուանդան դառնայ սրտիդ զոհարանի առաջ, որով դու բարձրանաս եւ այն սրբազան սեղանի վերայ զոհ մատուցանես, ինչ որ քեզ է պատկանում, ինչ որ քոնն է՝ մինչեւ անգամ քո կեանքդ:

Դու պէտք է անպայման հնազանդ լինիս քո Թագաւորին եւ Տիրոջը՝ ինչպէս հրեշտակներն երկնքում ամեն ժամանակ անկեղծօրէն հնազանդում են Աստուծուն:

Անտրտունջ եւ լռիկ մնջիկ հնազանդ եղիր քո մեծաւորներին, կատարիր՝ ինչ որ քեզ հրամայում են, իմացիր, որ տէրութեան օգուտն այդ է պահանջում: Զինուորական ծառայութեան մէջ անհնազանդութիւն, դիմադրութիւն, չէ ասել չը կայ: Ոչ ոք իրաւունք չունի ասելու. ես այս կ'անեմ, այն չեմ անիլ, այս տեղ ես կերթամ, միւս տեղ թող ուրիշը գնայ: Լաւ իմացիր, բոլոր ինչ

որ քեզ հրամայում են, դու ես պարտական կատարելու, ոչինչ բան քեզ համար անկարելի չը պէտք է լինի, մեռնել հարկաւոր է՝ մեռիր։ Այդ քո գործդ չէ դատել, թէ քո մեծաւորդ ի՞նչ է անում, կամ ի՞նչպէս է անում, իւր բոլոր կարգադրութիւնների մասին պատասխանատուն նա ինքն է տէրութեան եւ Աստուծոյ առաջին։

Իշխանութեանը դու ոչ թէ նորա համար պէտք է հնազանդես, որ նա կարող է քո անհնազանդութիւնդ պատժել. այդ բաւական չէ, դու պէտք էսիրես նորան եւ հաստատ հաւատացած լինիս, թէ ինչ որ նա անում է, ծառայութեան օգուտն այնպէս է պահանջում։

Սիրիր քո մեծաւորներիդ՝ ինչպէս ծնողի, ինչպէս Թագաւորի կողմից հաւատարմատարների։ Մի մոռանար, որ հնազանդութիւն եւ պատշաճաւոր վարք ու բարքը,

ինչ որ քո իշխանութիւնը քեզանից պահանջում է, ամէնից յառաջ քեզ է պէտք գալիս, քո անձին է օգուտ բերում։

Երբ որ կսկսեն քեզ վարժեցնել զինուորական ծառայութեան մէջ, աշխատիր ուշադիր լինիլ, սովորիր յօժարակամ՝ ինչ որ քեզ ուսուցանում են, իմացիր, որ մի ուսեալ մարդը տասն անուսումն արժէ։

Զինուորութեան մէջ քո ցոյց տուած յառաջադիմութիւնդ ոչ միայն կուրախացնէ քո մերձաւոր իշխանաւորներին, նա բարձրատիճան գլխաւորների սրտին էլ հաճելի կը լինի։ Ինքը՝ մեր Տէր եւ Հայր Թագաւորը շատ ուրախ կը լինի, լսելով իւր զօրքի բարեյաջող դրութիւնը։

Քո բարի վարք ու բարքդ եւ մեծ յառաջադիմութիւնդ կ՚ուրախացնեն նոյնպէս քո հարազատ գերդաստանիդ, երբ՝ որքան եւ հեռուից՝ նոքա կը լսեն քո մասին, ընդ հա-

կառակն քո վատ անունդ նոցա սիրտը կը վշտացնի։ Իմացիր, որ վատ լուրը շատ հեռուն կերթայ։

Վատ օրինակներից հեռու փախիր, լաւերին նմանիր։ Եթէ դու քո Հայրենի տանից հետդ բերած վատ սովորութիւններ ունիս, շտապիր մոռացման տալ, որովհետեւ զինուորական ծառայութիւնը—Թագաւորի ծառայութիւնը պահանջում է մաքուր լինել, լաւ լինել։

Ամենից լաւն է հէնց առաջին եկած օրից դինքդ նկատես եւ տեսնես, թէ ո՞ր պակասութիւնդ կարող է քեզ ստորացնել ընկերներիդ յառաջ, ինչը կարող է քեզ մեծաւորներիդ աչքից ձգել, աշխատիր, դեռ նրանք քեզ մատնացոյց չարած, ինքդ քեզ հեռացնես այն սովորութիւններից։

Եթէ տգէտ գիւղացին գիտէ գնահատել աշխատասէր մշակին, ո՞րչափ եւս առաւել

զինուորական ծառայութեան մէջ գնահատելի է լաւ զինուորը։

Ես արդէն ասացի քեզ, որ զինուորական ծառայութեան մէջ վերջին հասարակ զինուորից սկսած՝ մինչեւ գեներալը, բոլորեքեան մի նուիրական եւ սրբազան պարտականութիւն ունին կատարելու. այն է՝ արքունի Գահի եւ Հայրենիքի պաշտպանութիւնը։

Հէնց այդ պատճառաւ Ռուսիայի ընդհանուր զօրաբանակը պէտք է ոգեւորուած լինի միեւնոյն մտքով, միեւնոյն զգացմունքով, միեւնոյն-ձգտումով. նորա միակ նպատակը պէտք է լինի Ռուսիայի բարօրութիւնը։

Մեր բոլոր անհամար զօրքի մէջ փայլում է ինքը—մեր Թագակիր Կայսրը, ինչպէս որ երկնքումը փայլում է արեգակը անթիւ մոլորակների եւ աստղերի մէջ։ Նորա սէրը, Նորա շնորհքը, Նորա առատ ողորմութիւնը

կենդանարար արեգակի ճառագայթների պէս տարածուած է ռուսական ամբողջ քաջաբազուկ զօրաբանակի վերայ՝ վերջին զինուորից սկսած՝ մինչեւ յաղթահռչակ հերոս գեներալը։

Այս իսկ պատճառաւ Ռուսիայի բիւրաւոր զօրքերն ունելով միակ Օգոստափառ Հայր, մի ընդհանուր նպատակ, մի ընդհանուր օրէնք, պէտք է մի հօր որդւոց նման կապուած լինին միմեանց հետ սիրով։ Հաւատարմութիւնը, ճշմարտութիւնը, փոխադարձ օգնութիւնը թող կապեն քեզ ոչ միայն քո զօրագունդի զինուորների հետ, այլեւ ընդհանուր ռուսական զօրքի հետ։ Զանազանութիւն մի դնիլ՝ թիկնապահ զօրագնդիցն է նա, հեծելազօրքին է պատկանում, թընդանօթաձիգ է եւ այլն, բոլորին, բոլորին սիրիր քո եղբայրների պէս։

Սիրիր քո լոյս Հաւատն եւ նորա սուրբ

ծէսերը՝ աշխարհքումս ամէն բանից առաջել։ Քո Հաւատդ քո ամենալաւ ընկերն է, նա քեզ կ'օգնի հեշտութեամբ տանել ծառայութեան եւ պաշտօնի ամենատեսակ ծանրութիւնները, նա զօրավիգն եւ մխիթարիչ կը լինի քեզ ամենայն նեղութիւնների մէջ։ Ով հաւատարիմ է իւր Հաւատին, նա հաւատարիմ կը լինի եւ Թագաւորի օրէնքներին, այնպիսին հաւատով եւ ճշմարտութեամբ կը ծառայի Աստծուն եւ թագաւորին։ Ճշմարիտ հաւատով մեռնելն էլ հեշտ է։ Բայց ով որ իւր հաւատն ուրանայ եւ կորցի, նա կը կորցնի աշխարհիս վերայ ամենայն ինչ, նա երկնքումն էլ հանգստութիւն չի գտնիլ։ Այդ էր պատճառը, որ ամենամեծ զօրապետները՝ ինչպէս Սուվորովն եւ իւր նմանները՝ հաւատով մարդիկ էին։ Ամենայն գործ նոքա սկսում եւ վերջացնում էին աղօթքով։

Սրբութեամբ պահպանիր տօները, այդ օրերը մենք նուիրում ենք մեր Աստուծուն, նորա սուրբ պատուիրաններն ենք մտաբերում, յաւիտենական կեանքն ենք յիշում եւ հոգեպէս մխիթարուում։

Գնահատիր ծնողական օրհնութիւնը, մանաւանդ ծառայութեանդ վտանգաւոր րոպէներում, հաստատ հաւատացիր, որ ծնողական օրհնութիւնը, մեր աղօթքը ծուլերի ալիքներից եւ բորբոքուած կրակից կը փրկեն քեզ։

Երբ որ պատերազմի պատրաստութիւն է տեսնում եւ ամէն տեղ պատերազմի մասին են խօսում, դու մի՛ տխրիր։ Եթէ քեզ վիճակուում է ճակատ առ ճակատ կանգնել թշնամու հանդէպ, այն ժամանակն էլ ոգեւորութիւնդ մի՛ կորցնիլ, յիշիր, որ ամենայն ինչ Աստուծոյ ձեռքին է։ Քանի՞ քանի արիւնահեղ պատերազմների միջից շա-

տերն անմնաց, ողջ առողջ տուն են վերադարձել. ընդհակառակն ոմանք ծառայութեան առաջին տարին, դեռ թշնամու երես չը տեսած՝ մեռել են։ Մահն ու կեանքը մեր ձեռքին չէ, Աստուած է ամէնի կառավարողը եւ կարգադրիչը։ Դաւիթ մարգարէն ասում է. «Թող յարձակուին իմ վերայ բիւրաւոր թշնամիներ, թող շրջապատեն նոքա ինձ, եթէ Աստուծոյ կամքը չէ, ոչ միայն մահը, ոչինչ նեղութիւն, ոչինչ վիշտ չեն կարող ինձ մօտենալ» Ինքը մեր տէր Յիսուս Քրիստոսը մեզ սովորցնում է, որ առանց Աստուածային կամաց մեր գլխից եւ ոչ մի մազ չի վայր ընկնիլ։

Իսկ եթէ Աստուածանից վիճակուած է քեզ մեռնել պատերազմի դաշտում՝ թշնամու դէմ կռուելուս, հաստատ հաւատա՛, որ երկնքում՝ քո համար պատրաստ է մարտիրոսական պսակը, եւ որքան մահդ քեզ փառք

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-ԱՄՆ ГСР
Ա. ԱՄ. Ա. ՄԱՍԻՍՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
36/53-66

է։ Մեռնել Թագաւորի, Հաւատի եւ Հայրենիքի համար նշանակում է Հայրենիքի հարազատ որդու սրբազան պարտականութիւնը կատարած լինել։ Սուրբ աւետարանը մեզ ուսուցանում է զոհել մեր անձը մեր ընկերի համար. իսկ գիտե՞ս, ով է մեր ամենալաւ ընկերը՝ եթէ ոչ՝ մեր սուրբ եւ փրկաբար Հաւատը։ Ո՛վ է մեր համար ամենից բարձր եւ նուիրական, եթէ ոչ ինքը՝ Աստուծոյ Օծեալը, մեր երկրի տէր Թագաւորը, որին ինքն Աստուած է ընտրել եւ պսակել մեր համար այս աշխարհումն, Նա ինքն է, որ անդադար հոգում է Թանգագին Ռուսաստանի փառքի եւ երջանկութեան մասին։

Քեզ համար քո մայրենի հողից ի՞նչ աւելի սիրելի եւ թանգագին բան կայ, այն սուրբ հողն եմ ասում, որ մօրդ կաթի հետ սնուցել է քո մէջ քո սուրբ նախնիքների կրօնը, քո պապերի սովորութիւններն եւ աւանդու-

թիւնները։ Քո որդիական անձնուիրութիւնը, Կրօնիդ, արքունի Գահին եւ Հայրենիքիդ հաւատարմութիւնը՝ այս երեք անբաժանյատկութիւնները աճեցնում եւ յառաջ են տանում Ռուսաստանն իւր անթիւ զաւակներով, որին ոչ մի ազգ չի կարող հաւասարուիլ, որին ոչինչ թշնամի չի սասանեցնիլ։

Խօսքիս վերջումն յիշեցնում եմ քեզ այն երդումը, որ դու Աստուծոյ սուրբ տաճարի մէջ, սուրբ աւետարանի եւ կենդանարար խաչի առաջին հրապարակաւ տուել ես։

Դու երդուել ես Աստուծոյ անունով մինչեւ քո արեան վերջին կաթիլը հաւատարմութեամբ եւ ճշմարտութեամբ ծառայել արքունի Գահին եւ Հայրենիքին։ Մի՛ մոռանար, որ ինքն Աստուած անարեւութաբար ընդունել է քո երդումդ, երկնային հրեշտակներն եւ բոլոր սուրբերն անարեւութապէս վկայ են եղել քո խոստումներիդ։ Յի-

շիր, որ եթէ Աստուած պատժում է մարդուս ստախօսութեան համար, որչափ աւելի նա կը բարկանայ երդմնադրուժների վերայ։ Լսիր. երդմնաղանցն ուրանում է իրեն Քրիստոսին, ուրանում է նորա սուրբ աւետարանն եւ կենսատու խաչը. երդմնադրուժը պարզապէս Աստուծուն հակառակ է գնում. ուրիշ խօսքով ասենք, այնպիսի մարդն իւր անձնական հաշիւներն ու համոզմունքները, որոնց պատճառաւ նա դատաճանում է իւր երդմանը, Աստուածանից աւելի է համարում, այն Արարչին, որին ինքը վիայ է կանչել խոստումն անելու ժամանակ։ Դու լաւ իմացիր, Ռուս զինուորն երբէք չի դատաճանել իւր երդումին, նա ամէն տեղ հաւատարմութեամբ եւ ազնուութեամբ է ծառայել Թագաւորին եւ Հայրենիքին, նա երբէք չի մոռանալ, թէ ինքը որ տեղ եւ ինչ մահով պէտք մեռնի. նա միայն մի հոգս է

ունեցել. Ռուսաստանի անունը չարատաւորել։ Դու էլ, ուրեմն, ունեցիր քաջութիւն, կորովութիւն, աներկիւղ սիրտ, հաստատուն բնաւորութիւն եւ անվեհեր հոգի, ամօթ համարիր քեզ համար երկչոտութիւնը, վախը, փծին եւ ստորաքարշ յատկութիւնները եւ փոքրոգութիւնը, սարսափիր եւ դողա՛ երդմնադրժութիւնից։

Ընդունիր, իմ սիրելի բարեկա՛մ, խօսքիս վերջը. քեզ պաշար իմ սրտալիր ուղեւորական խրատներս եւ ամենայն սիրով պահիր սրտումդ։ Այս խօսքերն ուղղուած են քեզ եմ սրտի խորքից, մենք եղբայր ենք հաւատով, հայրենիքով, հպատակութեան զգացմունքով, անկեղծ սիրով եւ անձնուիրութեամբ դէպի արքունի Գահը։

Գնա՛ ծառայիր, Աստուած քեզ հետ. երկնային Նախախնամութիւնը քեզ օգնական թող լինի, նա զօրացնի քո ուժդ փառաւոր ծառայութեանդ մէջ։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԿՄ. Հ. Մասնայեցի անվան

104

2011

ՀՀ Ազգային գրադարան
NL0048847